29.09.2022
350-57

ՀՀ պաշտպանության նախարար
Սուրեն Պապիկյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Պապիկյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել տեղեկություններ հետևյալ հարցերի վերաբերյալ.

1. Հայաստանի դեմ Ադրբեջանի վերջին ռազմական ագրեսիայի հետևանքով քանի՞ մարտական դիրք է կորցրել հայկական բանակը։
2. Հայաստանի դեմ Ադրբեջանի վերջին ռազմական ագրեսիայի հետևանքով ՀՀ-ի որքա՞ն տարածք է անցել թշնամու վերահսկողության տակ։
3. Խնդրում ենք տրամադրել Հայաստանի դեմ Ադրբեջանի վերջին ռազմական ագրեսիայի հետևանքով զոհված զինծառայողների և քաղաքացիական անձանց անվանացանկը։

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում։

Ուշադրություն։ Խնդրում ենք հարցմանը ***պատասխանել բացառապես էլեկտրոնային եղանակով։***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am